

ԿՐՕՆԱԿԱՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ՝ ԱՍՏԻՃԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱԴՆՈՒՆՔՆԵՐԸ

Յօդուածին նպատակն է քննարկել քահանայական աստիճանին պարտականութիւններն ու իրաւումները: Մեր եկեղեցւոյ մէջ, կաթողիկոսէն մինչեւ եպիսկոպոս, վարդապետ եւ ամուսնացեալ քահանաները, քահանայ են երբ Ս. Պատարագ կը մատուցանեն: Պատարագի ընթացքին, երբ պատարագիչը կաթողիկոսը կամ եպիսկոպոս մըն է, «Մարմին Տէրունական» շարականին երգեցողութեան ժամանակ, եկեղեցւոյ իշխանները՝ իրենց աստիճանի զգեստները (եմփիորոն, արտախուրակ, պամակէ, մատանի, եւայլն) կը հանեն եւ Ս. Պատարագը կը շարունակեն որպէս քահանաներ:

Յօդուածիս նպատակն է նաեւ լուսարձակի տակ առնել քահանայական աստիճանը, որ կը տրուի կուսակրօն եւ ամուսնացեալ քահանաներուն, որոնք ձեռնադրութեան ընթացքին կը ստանան յատուկ իրաւումներ եւ իրենց կը շնորհուի յատուկ պարտականութիւններ, զորս միայն իրենք կրնան մատակարարել: Ամուսնացեալ քահանաները, մեր եկեղեցւոյ անմիջական կապն են մեր ժողովուրդի զաւակներուն հետ:

Քահանայական աստիճանի պարտականութիւններն եւ իրաւունքներն ըսելով՝ չեմ ակնարկեր այն բազմազան պարտականութիւններուն եւ իրաւունքներուն, զորս քահանայական աստիճան ունեցող անձ մը աշխարհիս վրայ ապրող նման պատասխանատու աստիճան ունեցող բոլոր անձերու հետ առաւել կամ նուազ չափով ունի: Քահանան, ոչ եկեղեցական անձերու նման, ունի քաղաքացիական, ազգային, հանրային եւ առտնին պարտականութիւններ եւ իրաւունքներ: Որպէս եկեղեցական, ան ունի իր սեփական պարտաւորութիւններն ու իրաւունքները իբրեւ հայր եւ ընտանիքի տէր², իբրեւ դրացի եւ բարեկամ, իբրեւ քաղաքացի եւ հասարակութեան անդամ: Բայց ասոնք մեր յօդուածին նպատակը չեն, ոչ ալ կ'ուզենք ակնարկել մարդասիրական, կրթական, գրական³ եւ բարեգործական այն պարտաւորութեանց եւ իրաւունքներուն մասին, որոնց կը մասնակցին քահանաները զանազան գաղութիւններու մէջ, իրենց կարողութեանց եւ յարմարութեանց համաձայն:

Ուրեմն, քահանայական աստիճանի մասնաւոր պարտականութիւններն եւ իրաւունքներն ըսելով կը հասկնանք այն պարտաւորութիւններն ու իրաւասութիւնները (իրաւունքները), որոնք քահանային եւ միմիայն քահանային կը պատկանին: Այս պարտաւորութիւններն ու իրաւասութիւնները, որոնք միմիայն եպիսկոպոսական ձեռնադրութեամբ կը տրուին եւ կ'ընդունուին, անջնջելի եւ անլուծանելի կերպով իւրաքանչիւր ձեռնադրուող անձի հետ կը միանան եւ կը նոյնանան:

Նախքան ձեռնադրութեան Մաշտոցի քննութեան անցնիլը, արագ ակնարկ մը

¹ Այստեղ կ'արժէ յիշել 1906-ին «ԼՈՅՍ» շաբաթաթերթին մէջ յիշուած հետեւեալ յօդուածը «Որո՞նք Կրնան Քահանայ Ըլլալ», թիւ 6, էջ 138 – 144: Ինչպէս նաեւ Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսի (յետագային Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1977 – 1995) եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց (1995 – 1999) հարցազրոյցը, որ ան տուած է Յունիս 30, 1978-ին, «Քահանայութեան Մեծութիւնը» վերնագրով:

² Մեսրոպ Գ., «Հովուական Աստուածաբանութիւն Հայոց Ս. եկեղեցւոյ», էջ 107 – 108:

³ Նոյն տեղում, էջ 108 – 110:

նետենք քահանայի աստիճանի հաստատման մասին: Եկեղեցւոյ նուիրապետութեան առաջին պաշտօնեաները տասներկու առաքեալներն էին, որոնց Քրիստոս յանձնեց իր նորահաստատ Եկեղեցւոյ տարածման եւ հովութեան պաշտօնը ըսելով՝ «Գացէ՛ք, հետեւաբար, եւ աշակերտ դարձուցէ՛ք բոլոր հեթանոսները. մկրտեցէ՛ք զանոնք Հօրը, Որդիին, եւ Սուրբ Հոգիին անունով» (Մատթէոս 28:18-20): Հստ այս հրահանգին, Եկեղեցւոյ նուիրապետութեան համայն իրաւունքները, իշխանութիւններն ու գործադրելու զօրութիւնները տասներկու առաքեալներուն յանձնուած էին. այսինքն, այն ամէնը որ ըստ պարագաներուն դարերու ընթացքին զանազան ճիւղերու բաժնուեցաւ, եւ դարերէ ի վեր մասամբ եպիսկոպոսներուն, մասամբ քահանաներուն եւ սարկաւագներուն եւ բազմաթիւ ուրիշ ստորաբաժանեալ աստիճանաւորներուն յանձնուած է, սկիզբէն առաքեալներուն ձեռքն էր: Ուրիշ խօսքով, իւրաքանչիւր առաքեալ թէ՛ հայրապետ էր, թէ՛ եպիսկոպոս, թէ՛ քահանայ, թէ՛ սարկաւագ, եւայլն եւ եթէ եկեղեցին, իր նախնական՝ փոքր եւ սահմանափակ դրութեան մէջ մնար, բնական է որ նուիրապետական աստիճանները այսքան չէին բազմանար, եւ առաքելական իշխանութիւն ունեցող աստիճանաւոր ամէն բանի բաւական կ'ըլլար, թէ՛ քահանայութեան, թէ՛ եպիսկոպոսութեան, եւ թէ՛ սարկաւագութեան պաշտօնը կատարելու:

Այսուամենայնիւ, Եկեղեցին առաջին օրէն բազմացաւ եւ շատցաւ, որովհետեւ Եկեղեցւոյ առաքելութիւնն էր Քրիստոսի պատգամը աշխարհին տարածել: Այս առաքելութիւնը կը պահանջէր ստորաբաժանումներ: Առաքելական որոշումով ստեղծուած նախնական եւ գլխաւոր բաժանումներն էին, որոնք մինչեւ այսօր կը մնան գրեթէ բոլոր եկեղեցիներուն մէջ, եպիսկոպոսութիւն, քահանայութիւն⁴ եւ սարկաւագութիւն: Վերոյիշեալ տէրունական հրահանգէն տեսանք որ Երկոտասան Առաքեալներուն (եւ հետեւաբար իրենց յաջորդներուն) առաջնահերթ պաշտօնն էր՝ **ՔԱՐՈՁԵԼ՝** եւ **ՄԿՐՏԵԼ**: Այս երկու բառերուն մէջ ամփոփուած են Եկեղեցւոյ պաշտօնեային բոլոր սովորական պարտաւորութիւնները: Երբ Եկեղեցւոյ նուիրապետութիւնը բաժնելու հարկը ստեղծուեցաւ, Եկեղեցւոյ վերին հսկողութիւնը, այսինքն քահանայ եւ սարկաւագ ձեռնադրելու պաշտօնն ու թեմի կամ վիճակի ընդհանուր վերակացութիւնը յանձնուեցաւ եպիսկոպոսին. եւ իւրաքանչիւր կամ մասնաւոր եկեղեցւոյ կամ ժողովուրդին քարոզելու եւ խորհուրդները մատակարարելու պաշտօնը քահանաներուն վստահուեցաւ, իսկ իւրաքանչիւր եկեղեցւոյ արտաքին պէտքերը, նիւթական մատակարարութիւնը, սպասաւորութիւնը, աղքատներուն խնամարկութիւնը եւ այլն, սարկաւագներուն յանձնուեցաւ, որոնք քահանային հրահանգին համաձայն կը կատարէին իրենց պաշտօնը: Այս յօդուածին նպատակը եպիսկոպոսական կամ սարկաւագական աստիճաններուն մասին տեղեկութիւններ կայացնելը չէ: Մեր դիտողութիւնները քահանայական աստիճանին համար են, որուն շնորհուած են առաքեալներու կողմէ քարոզելու եւ խորհուրդները մատակարարելու պաշտօնը:

Քահանան ամէն բանէ առաջ «Աստուծոյ ծառան է»: Իր կեանքի եւ իր կատարած քահանայական պաշտօնի աւարտին, ինք Աստուծոյ առջեւ պիտի կանգնի եւ հաշիւ պիտի ներկայացնէ իր գործունէութեան, ծառայութեան, եւ պաշտօնին մասին: Քահանան հաշուետու ըլլալով Աստուծոյ, իր ծառայական կեանքի ամէն հանգրուանին պէտք է ի մտի ունենայ Եզեկիէլ Մարգարէին տեսիլքը. «Մարդու Որդի, քեզ Իսրայէլի տան պատասխանատու նշանակեցի: Եւ ինձմէ պիտի լսես պատգամները եւ պիտի սպաննաս անոնց իմ կողմէ: Երբ որ անօրէնիմ ըսեմ թէ մահուամբ պիտի մեռնի եւ դուն չզգուշացնես զիմ եւ չխօսիս իրեն որ իր անօրէն չար նամբաներէն ետ դառնայ եւ

⁴ Աշրքեան Պատրիարք Խ., «Կենցաղ եկեղեցականաց» էջ 32 – 43: Սարգիսեան Կաթողիկոս Գ., «Համառօտ Ձեռնարկ Հովուական Աստուածաբանութեան», էջ 169 – 191: «ՍԻՈՆ», Խմբագրական, 1929, էջ 291 – 294:

⁵ Աշրքեան Պատրիարք Խ., «Կենցաղ եկեղեցականաց», էջ 105 – 131:

ապրի, եւ անօրէնը իր անօրէնութեան մէջ մեռնի, անոր արիւնը քու ձեռքերէդ պիտի պահանջեմ» (Եզեկիէլ 3:17-18): «Ուրբա՛ն ծանր եւ դժուարակիր է իր պաշտօնը: Խօսիլ ու գործել Աստուծոյ անունով, Անոր ամենատես աչքի խորաքնին նայուածքին տակ, Անոր պահանջատիրութեան անխուսափելիութեան գիտակցութեամբ, հաշիւ տալու պարտաւորութիւնը հոգիին մէջ»⁶:

Հիմա մեզի կը մնայ քննել, եթէ Հայց. Եկեղեցին առաքելական այս կարգադրութիւնը պահպանած եւ հաստատա՞ծ է, թէ քարոզութեան պաշտօնը՝ խորհուրդներու մատակարարութեան պաշտօնէն բաժնուա՞ծ է, եւ քահանաներու տարբեր եւ նուազ պարտք եւ իրաւունք շնորհա՞ծ է քան այն, զոր առաքելները շնորհեցին:

Մեր նպատակն այստեղ Մաշտոցի քահանայական ձեռնադրութեան ամբողջ կարգը մանրամասնօրէն քննելը չէ, այլ այդ կարգէն քաղել այն վկայութիւնները, որոնք յօդուածիս առարկան հանդիսացող քահանայական կարգը լուսաբանելու եւ բացատրելու կը ծառայեն, այսինքն քահանաներու պարտականութիւններն ու իրաւունքները սահմանելու կը ծառայեն:

Քահանայի պարտականութիւններու եւ իրաւունքներու իմացման կամ ճանաչման գլխաւոր աղբիւրը՝ Ձեռնադրութեան Մաշտոցն է: Արդարեւ, դարերէ ի վեր, Հայց. Առաքելական եւ Ուղղափառ Եկեղեցին անկերպարան վիճակի մէջ կը գտնուէր⁷. հազուագիւտ եկեղեցական ժողովներ տեղի ունեցած են (վերջինը՝ 2013-ի Եպիսկոպոսական Ժողովն էր: Ատկէ առաջ, էջմիածնի մէջ Եպիսկոպոսական Ժողով գումարուած էր 1969-ին), որոնք Եկեղեցւոյ կարիքները մատնանշած են, բայց արդիւնաւէտ աշխատանք չեն կատարած: Պաշտօնական կանոնագիրք⁸ չունինք մեր ձեռքերուն մէջ, ուրկէ

⁶ Գարեգին Բ. Կաթողնկոս, շարունակելով իր վերլուծումը ֆահանայական պաշտօնին մասին, կ'ակնարկէ այն աստուածային կոչին, այդ կոչին ընդառաջելու, եւ այդ կոչողին կողմէ առաքելու վսեմ պատանխանատուութեան, պարտականութեան, եւ իրաւունքին, որ ֆահանայինն է միմիայն: Խօսելով Հայ Քահանային մասին, Գարեգին Բ. կ'ընդգծէ ֆահանային ազգային դերակատարութիւնն ու պարտաւորութիւնները, իր հոգեւոր առաքելութեան կողմէ: Այստեղ չենք ուզեր այդ մանրամասնութիւններուն մէջ մտնել (Տե՛ս Ձեռնարկ Հովուական Աստուածաբանութեան, էջ 169 – 191):

⁷ Ապրելով Ռուսական, Պարսկական, եւ Օսմանեան պետութիւններու տիրապետութեան տակ, Հայց. Եկեղեցին չունէր ազատութիւնը եւ վարչամեքենան իր գործունէութիւնը աւելի արդիւնաւոր կերպով մատուցանելու Հայ Ժողովուրդին: 1836-ի Ռուսական Կառավարութեան շնորհած Պօլօժնիան ունէր գաղտնի նպատակներ (այս վարչամեքենան ոչ միայն իրաւասութիւններ եւ սահմանափակումներ տուաւ կաթողիկոսին, ան ի մտի ունէր արտաքին ֆաղափականութիւն կատարել կաթողիկոսին անձին ընդմէջէն Օսմանեան եւ Պարսկական պետութիւններուն հետ: Այդ շրջագծին մէջ, Ռուս Ուղղափառ եւ Հայ Առաքելական եկեղեցիները գործակցեցան պահպանելու Հայ Եկեղեցւոյ հաւատքը, այնքան ատեն որ այդ գործակցութիւնը կը ճանձնար Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ գերազանցութիւնը): Միւս կողմէ, 1861-ի Սահմանադրութիւնը Օսմանեան Կայսրութեան կողմէ, Ռուսական պետութեան իբրեւ հակադարձութիւն, Հայ Եկեղեցւոյ (Կ. Պոլսոյ Պատրիարքութեան, եւ անոր ընդմէջէն Սոյւ եւ Աղքատարի Կաթողիկոսութեան) կու տար այսպէս կոչուած աշխարհականներու ամբողջական մասնակցութիւնը եկեղեցւոյ գործերուն: Հայ Եկեղեցւոյ պարագաներն այնպէս էին, որ արտաքինապէս Եկեղեցին կ'երեւէր տագնապալի վիճակի մէջ: Nersoyan H., “Remarks on A Proposed Constitution for the Armenian Church,” Jerusalem, 2001, pp. 11 – 13.

⁸ Հայ Եկեղեցւոյ կանոններուն ամբողջական ցանկը հրատարակուեցաւ Վազգէն Յակոբեանի խմբագրութեամբ, երկու հատորներով, առաջինը 1964-ին եւ երկրորդը՝ 1971-ին (Յակոբեան, Վազգէն, Կանոնագիրք Հայոց, Երեւան, 1964, 1971): Հայ Եկեղեցւոյ կանոնները հազուագիւտ կերպով ռուսումնասիրուած են եւ, այնպէս կ'երեւի, մեր եկեղեցականութեան մեծամասնութիւնը լատիկա ծանօթ չէ անոր: 19-րդ դարէն ի վեր, Հայց. Եկեղեցին կառավարուած է օտարներէ (Ռուսական եւ Օսմանեան կայսրութիւններէն) տրուած «Սահմանադրութիւններով», որոնց մէջէն մեծապէս բացակայ են մեր Եկեղեցւոյ ժողովներուն կանոնները: Թերեւս մեր Եկեղեցւոյ բարեկարգութեան սահմաններէն ներս նկատի առնուի այս կէտը: Յակոբեանի բառերով «Հայոց Կանոնագիրքը Հայ Եկեղեցւոյ եւ Ժողովրդի առաջին օրէնսդրական փաստաթղթերն են, կազմաւորելով հայկական առաջին կանոնագիրքը» Օձնեցի կաթողիկոսի օրով: Մեր Եկեղեցւոյ ժողովներուն կանոններուն մեծամասնութիւնը բարեկարգական եւ բարեկարգչական կանոններ են: Կանոններուն մեծամասնութիւնը եկեղեցականութեան, եւ ի մասնաւորի ամուսնացեալ ֆահանայութեան վարժ ու բարգի բարեխաւման եւ բարեկարգութեան մասին է: Nersessian V., “Armenian Church Historical Studies,” New York, 1996, pp. 177 – 193:

կարելի ըլլայ քահանայական կարգի պարտաւորութիւններուն եւ իրաւասութիւններուն օրէնքներն ու սահմանումները օրինաւորապէս կատարել: Որքա՛ն ցաւալի եւ ամիսոսալի է այս պակասութիւնը եւ պէտք չէ մոռնալ, որ եկեղեցական իրականութեան մէջ երբեմն կենդանի աւանդութիւնը օրէնքի տեղ կը բռնէ: Որքա՛ն զատողութիւններ տեղի կ'ունենան երկրորդական սովորութիւններու եւ պարագաներու մէջ, բայց էական եւ հիմնական օրէնքները հաստատուն կը մնան շնորհիւ հասարակաց պաշտամունքներուն եւ այդ առիթով կատարուած արարողութիւններուն, աղօթքներուն, ընթերցումներուն եւ երգերուն: Երբեմն դժուար է ինչ-ինչ վարդապետութիւններու հաստատումը կատարել աղբիւրներու հիմամբ, սակայն, բարեբախտաբար, քահանաներու պարտաւորութիւններուն եւ իրաւունքներուն մասին ոեւէ միութիւն կամ դժուարութիւն գոյութիւն չունի⁹: Ձեռնադրութեան Մաշտոցը ամենէն պարզ եւ յստակ կերպով կը բացատրէ, կը հաստատէ, կը լուսաբանէ օրինակներով, Ս. Գրոց հատուածներով եւ խորհրդաւոր արարողութիւններով՝ ձեռնադրուող քահանային իւրաքանչիւր պարտաւորութիւնները եւ իրաւունքները:

Քահանայական աստիճանը անջնջելի է: Ամէն մարդ, այս աշխարհին մէջ կրնայ պաշտօնի կոչուիլ՝ նախարար, վերակացու, գրագիր, ծառայ, եւ իր մեծաւորին կողմէ կրնայ նաեւ պաշտօնանկ ըլլալ եւ իր պաշտօնը կորսնցնել: Քահանային պաշտօնը այդպէս չէ: Քահանայութեան կոչողը Աստուած է, եւ ամենէն առաջ ընծայացուն ինքը պէտք է այդ կոչումը իր սրտին եւ հոգիին մէջ զգայ: Երկրորդ՝ ժողովուրդը¹⁰ եւս պէտք է ընծայացուին արտաքին վարքէն եւ անոր ունեցած մտաւոր եւ բարոյական յատկութիւններէն համոզուի թէ այդ կոչումը ստույգ է եւ աստուածային է¹¹. Երրորդ՝ ձեռնադրող եպիսկոպոսն ալ իր կողմէ պարտաւոր է քննել եւ ստուգել այդ կոչման հանգամանքը¹²,

Nersoyan H., “Remarks on A Proposed Constitution for the Armenian Church,” Jerusalem, 2001, p. 14 - 18.

⁹ «Հայ Եկեղեցւոյ վերագարծմբին եւ վերածաղկումին համար անհրաժեշտ է նոր հոգեւորականութիւն մը, որ կարենայ կապել հինը նորին, մեր անցեալը խառնել ներկային հաւասարապէս հմուտ ըլլալով մեր պատմութեան, գրականութեան, ծէսին, կանոնական դրութեան եւ բոլոր այն հոգեւոր արժէքներուն, որոնք պահեցին մեր ժողովուրդը կենդանի՝ իր քրիստոնէական եւ հայկական դիմագծութեան մէջ» («ՀԱՄԱ», 1965 Նոյեմբեր-Դեկտեմբեր, էջ 472 – 478):

¹⁰ Այստեղ, ժողովուրդ բառով կը հասկցուի Եկեղեցւոյ անդամ եղող (Հայ Եկեղեցւոյ մէջ մկրտուած եւ դրոշմուած) անհատները, բայց շատ յաճախ Եկեղեցւոյ բարեխնամ հոգաբարձութեան անդամներն են, որ Առաջնորդներուն հետ կը ծրագրեն Հոգեւոր Հովիւի նշանակումը եւ կամ ընտրութիւնը: Ցաւալին այն է, որ շատ յաճախ եւ դժբախտաբար «գէշ սովորութեան» վերածուած է, որ անհատներ, որոնք Եկեղեցւոյ գործունէութենէն, կարգ ու սարքէն, Ս. Ներսէս Լամբրոնացիի համաձայն «Եկեղեցւոյ դուռը ուր է չեն գիտեր», հոգաբարձութեան անդամ կ'ընտրուին եւ կամ կը նշանակուին, որպէսզի այսինչին կամ այնինչին «խաղալիք» դառնան որոշումներու ժամանակ: Ահա այսպիսի ոչ-Եկեղեցական անհատներու ներկայութիւնն ու մասնակցութիւնը փահանայացուի ընտրութեան մէջ կրնայ շատ վատ արդիւնք ունենալ Եկեղեցւոյ աշխատանքներուն եւ առաքելութեան վրայ:

¹¹ Դժբախտաբար, այս օրերուս, ծիսականներ ձայն չունին իրենց հոգեւոր պաշտօնէայի ընտրութեան կամ նշանակութեան հարցին մէջ: Մեր Եկեղեցւոյ բարեկարգութեան ուրիշ կէտերէն մէկն է ասիկա: Մեր Եկեղեցին չի նմանի Հռոմէական Լատին Եկեղեցւոյ: Մենք բոլորովին տարբեր սահմանադրութիւն ունինք (պէտք է հիմնուած ըլլայ կանոնագրին վրայ, բայց ասիկա ուրիշ յօդուածի նիւթ է): Մեր Եկեղեցւոյ ամենայնպէս տիրացուն մինչեւ կաթողիկոս, ժողովրդական ազատ եւ անկախ ընտրութեամբ պաշտօնի կը կոչուին: Մեր ազգի բոլոր կրթական հաստատութիւնները մեծաւ մասամբ աշխարհականներու խնամքին եւ մատակարարութեան տակ կը գտնուին: Հայ Բանաստեղծական ընտրութեան իրաւունքը կը պատկանի հայ ժողովուրդին, որ իր սիրածն ու յարմար դատածը կ'ընտրէ, եւ եպիսկոպոսին կը ներկայացնէ ձեռնադրութեան համար եւ ժողովուրդն է որ կը հաստատէ եպիսկոպոսին օրհնութիւնը՝ «եղիցի, եղիցի» ըսելով: Գէորգ Մեսրոպ, իր «Հովուական Աստուածաբանութիւն Հայց. Ս. Եկեղեցւոյ» գրքին մէջ (էջ 81 – 83), յստակ կերպով կը բացատրէ թէ «Բանի որ գերբնական յայտնութեան չէ որ կը սպասուի, տարակոյս չկայ թէ այդ յատկութիւնները, ընդունակութիւնը եւ փափաքը երկու վկայութիւններով կրնան յայտնուիլ. ա. ենթակային եւ բ. գիմք շրջապատողներուն կամ քանջողներուն վկայութիւնը»:

¹² Տարակոյս չկայ որ ձեռնադրող եպիսկոպոսներուն մեծամասնութիւնը խորապէս եւ լաւապէս կը ճանչնան ընծայեալը: Մէկը կրնայ նախկին Բանաստեղծական մը զաւակը ըլլալ կամ ուրիշ մը կրնայ պատանեկութեան ժա-

եւ ապա ձեռնադրել «իր անձին եւ բոլոր ժողովուրդին վկայութեան համաձայն»:

Արդարեւ եպիսկոպոսի ձեռնադրութեամբ է որ Ս. Հոգւոյն շնորհքը կը տրուի ընծայացուին, բայց մէկ անգամ պարգեւուած այս շնորհքը կարելի չէ որեւէ ձեռով ետ առնուի կամ ջնջուի, որովհետեւ այդ շնորհքը պարգեւողը Աստուած է եւ եպիսկոպոսը Աստուծոյ կամակատարն է, որ պարգեւելու հրաման ունի, բայց ետ առնելու հրաման չունի: Այս անխախտելի օրէնքը ոչ միայն քահանայական աստիճանին կը պատկանի, այլ նաեւ Ձեռնադրութեան միջոցին հանդիսաւորապէս յանձնուած է իւրաքանչիւր պատաւորութեանց եւ իրաւունքներուն, այնպէս որ անկարելի է այդ պատաւորութիւններէն եւ իրաւունքներէն ոեւէ մէկը կապտել առանց քահանայական աստիճանի անջնջելիութեան դէմ չարաշար կերպով մեղանշելու¹³:

Քահանայական Ձեռնադրութեան կարգը երկու առանձին եւ իւրայատուկ մասերէ կը բաղկանայ. մէկը՝ կոչման արարողութիւնն է, միւսը՝ բուն ձեռնադրութիւնը: Կոչման կարգը ուրիշ բան չէ, եթէ ոչ եպիսկոպոսին կողմէ ստուգել եւ քննել երեք կէտեր.

1. եթէ ընծայացուն աստուածային կոչում ունի,
2. եթէ այդ կոչումը ժողովուրդին հաստատութիւնն ու վկայութիւնը ունի¹⁴,
3. եթէ ըստ եպիսկոպոսին ընծայացուն քահանայութեան աստիճանի բոլոր ներքին եւ արտաքին յատկութիւնները ունի:

Ա. ԿՈՉՈՒՄ

Ուստի եպիսկոպոսին առաջին հարցումն է.-

«Եւ գիտե՞մք եթէ կամաւոր կերպով կու գայ այս կարգին, եւ յօժար կամֆ՞ով յանձն կ'առնէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի լուծը, այլ ուրիշներու հրաւերով¹⁵»:

մանակ եկեղեցի յանախած եւ դպիր ձեռնադրուած անձ մըն է: Միատէր Բանանան թերեւս ճանչնայ, բայց կարեւոր է նաեւ որ ձեռնադրող եպիսկոպոսը ձեռնադրութենէն առաջ հարցաւնէ թեկնածուն, որպէսզի, ինչպէս ժողովուրդը կը սիրէ ըսել. «առաւ-փախաւը տէր տէր չըլլայ»: Իւրաքանչիւր ձեռնադրող եպիսկոպոս իր ընծայացումները ընտրէ, իր լիազօր իշխանութեան ներքէ կրթէ, ինչպէս որ ինք յարմար կը դատէ, ձեռնադրէ իր ուզած ժամանակ (երբ թեկնածուն իսկապէս պատրաստուած է) եւ կարգէ իր թեմին մէջ գտնուած եւ իր յարմար դատած ոեւէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ, տեղւոյն Հոգաբարձութեանց եւ ժողովուրդին հետ համաձայնաբար: **Աշրգեան Պատրիարք Խ.**, «Կենցաղ եկեղեցականաց» էջ 18 – 23:

¹³ Խօսքն այստեղ ժամանակաւոր պատիժներու մասին չէ, որոնք կրնան նաեւ երկարամեայ ժամանակամիջոց ունենալ:

¹⁴ Որովհետեւ այդ կոչումը որքան ընծայեալին կը պատկանի, գրեթէ նոյնքան եւ աւելիով ժողովուրդին կը պատկանի, որուն հովիւը ըլլալու կը պատրաստուի ան, եւ աստուածային ներշնչումն ալ հաւասարապէս պէտք է ազդէ ընծայեալին եւ ժողովուրդին վրայ: Դժբախտաբար գաղութներ այս պատեհութիւնը չունին երբ առաջնորդներ հոգեւոր հովիւ կը ձեռնադրեն կամ կը հրաւիրեն: **Աշրգեան Պատրիարք Խ.**, «Կենցաղ եկեղեցականաց» էջ 23 – 28:

¹⁵ «Այս հարցումը կ'ուղղուի, որովհետեւ յօժար կամքը ապացոյցն է *կոչումի*: Այն որ կոչում ունի կամ կը զգայ իր կոչումը, ինքնաբերաբար կու գայ Փրկչին լուծը վերցնելու: Հարկը, ստիպումը գործ չունի հոն: Անոնք, որ ստիպումով ինչպէս նաեւ ուրիշ հաշիւներով կը մտնեն հոգեւոր լուծին տակ, շահաւոր եւ դիւրին ասպարէզ մը ընտրած ըլլալու խելով, ո՛չ միայն կ'իյնան, այլ նաեւ կ'անպատուեն իրենց ընտրած ստանձնած պաշտօնը... Եթէ հայ եկեղեցականութիւնը [ի մասնաւորի ամուսնացեալ եկեղեցականութիւնը] կը բնադատուի իր անկարողութեան եւ ուրիշ անյարմարութիւններուն համար, ասոր առաջին պատճառը պէտք է փնտռել կոչումի բացակայութեան մէջ... Կոչումի վրայ խօսելու ատեն, կ'արժէ մտահան չընել Փրկչին դիտողութիւնը, կանչուածներու բազմութեան եւ ընտրուածներու սակաւութեան մասին: Ուրիշ խօսքով պիտի ըսէինք՝ ընտիր պաշտօնէութեան մը ծնունդ տուող առաջին պայմանն է կոչումը: Բարեկարգութեան տեսակէտէն, իբրեւ գործնական բայ, պէտք չէ եկեղեցական ըլլան անոնք, որոնք կոչում չունին» (**ՍԻՈՆ**, 1929, Մայիս, էջ 131): Գէորգ Մեսրոպ հետեւեալ ձեւով կը սահմանէ այս հարցումը. «Պէ՛տք է շփոթել, ուրեմն, բուն *կոչումը* այս շահախնդրական հակումին հետ: Արդ, հովուական պաշտօնին նկատմամբ իր ունեցած արժանատրութիւնը հասկնալու համար, պարտի մարդ հետեւեալ նշաններուն միտ դնել ու զանոնք փնտռել իր անձին վրայ: Հարազատ եկեղեցական կոչումին նշաններն են՝ *նուիրումի ոգի, բաղձանք* կամ *պաշտօնասիրութիւն, նպասակի*

Գոհացուցիչ պատասխան ստանալէ ետք, եպիսկոպոսը կը զգուշացնէ եւ միանգամայն կը քաջալերէ՝-

«Այսպէս կ'ըսէ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս. ոչ ոք ինծի կու գայ եթէ իմ երկնատու Հայրս չծգէ անոր որ ինծի գայ եւ բոլոր անոնք, որոնք ինծի կու գան, զանոնք երբեք պիտի չմերժէ» (Յովն. 9:44):

Ասկէ կը հետեւի թէ քահանայութիւնը աստուածային կոչում է («Իմ Հայրս կ'առաջնորդէ զինք ինծի») եւ ստանալէ վերջ՝ անջնջելի է («երբեք պիտի չմերժէ զանոնք»): Ապա եպիսկոպոսը առաջ կը տանի իր քննութիւնը եւ կը ստուգէ եթէ այդ կոչման¹⁶ համաձայն ընծայացուն «աշխարհի բոլոր հոգեւր եւ աշխարհի սովորութիւններով ապրիլը թողա՞ծ է» եւ «իր անձը սուրբ եւ անառատ պահա՞ծ է իր ծնունդէն մինչեւ այսօր»:

Քննութեան երկրորդ եւ կարեւոր կէտն է «Բահանայութեան ամբողջական ուսումը եւ աստուածային օրէնքներու գիտութիւնը ունի՞»¹⁷: Կարելի է որ մարդ մը այն աստիճան բարեպաշտական զգացում ունենայ որ կարծէ թէ ինք քահանայական կոչում ունի եւ ժողովուրդն ալ նոյնպէս արտաքին հանգամանքներէ սխալի եւ քահանայութեան արժանի նկատէ զինք, բայց առանց իսկապէս ունենալու «Բահանայութեան ամբողջական ուսումը եւ աստուածային օրէնքներու գիտութիւնը ունի»¹⁸ այդպիսի կոչումն իսկական եւ կատարեալ եւ զաստուածակոյս կողմէ նկատելու իրաւունք չունինք: Անշուշտ Աստուած կրնայ աշխարհիս ամենէն տխմար եւ անուս մարդիկը, օրինակ գալիլիացի ձրկնորսները, հրաշալի զօրութեամբ իմաստացնել, բայց մենք իրաւունք չունինք այդպիսի բացառիկ դէպքեր օրէնքի տեղ դնել եւ մեր քահանաներուն ուսումն ու կրթութիւնը «կոյր բախտի» ձեռքը ձգել: Ինչ որ ալ ըլլան մեր Եկեղեցւոյ ակնկալութիւնները մեր քահանաներուն «Բահանայութեան»¹⁹ ամբողջական ուսումը եւ աստուածային օրէնքներու գիտութիւնը ունի՞ մասին, մեր դպրեմանքերը²⁰ տարբեր կարծիքներ եւ դասընթացքներ

սրբութիւն եւ վերջապէս ֆիզիքական, միաւորական եւ բարոյական յարմարութիւններ» (էջ 84): Աշրգեան Պատրիարք Խ., «Կենցաղ եկեղեցականաց» էջ 15 – 18:

¹⁶ Բարգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս, ՍիՈՆ պաշտօնաթերթին մէջ (1929-1930) հրատարակած է Հայ եկեղեցւոյ Բարեկարգութեան վերաբերեալ յօդուածաշար մը, որուն 7-րդ բաժինը կը խօսի «Եկեղեցւոյ Պաշտօնէութեան» մասին, եւ առաջին ենթաբաժին մէջ կը քննարկէ եկեղեցւոյ պաշտօնէային կոչումը: Այս նիւթին առնչութեամբ, Բարգէն Կաթողիկոս կը կատարէ հետեւեալ շատ կարեւոր կէտը. «Հոգեւորականութիւնը կոչում մըն է: Ասպարէզը՝ շահու եւ փառքի ետպիւն նկատումներու գաղափարը կու տայ, մինչ կոչումը կ'արտայայտէ անշահախնդրութեան, նուիրումի, ծառայութեան ոգին» («ՍԻՈՆ», 1929, Մայիս, էջ 129 – 131):

¹⁷ Դժբախտաբար, այս օրերուս բաւարար կարեւորութիւն չի տրուիր Բահանայական աստիճանի թեկնածուններուն ուսումնական կարեւորութեան: Արդարեւ, անուրանալի է որ հայ կղերը, եւ ի մասնաւորի ամուսնացեալ կղերը, կատարեալ ըլլալէ շատ հեռու է եւ մեծամասնութիւնը, բացառութիւնները միշտ գովելի եւ յարգելի են, ո՛չ իր կոչման ամբողջական հասկացողութիւնը ունի, ո՛չ ալ մեր եկեղեցւոյ Բահանայական պատրաստութեան պահանջները կը լրացնէ: Տարակոյս չկայ որ իննսուն իննը առ հարիւր ո՛չ ձեռնադրող եպիսկոպոսը եւ ո՛չ ալ ձեռնադրելի ընծայացուն կրնան խղճի մտօք եւ մաքրութեամբ «այո» ըսել Մաշտոցի այն հարցումին թէ «Ունի՞ զուսումն Բահանայութեան լիովին, եւ զգիտութիւն աստուածային օրինացն», եւ «զգաւանութիւն ուղղափառ հաւատոյ»: ՄԵՍՐՈՍ Գ., «Հովուական Աստուածաբանութիւն Հայց. Ս. եկեղեցւոյ», (էջ 92 – 99):

¹⁸ Զարեհ Արք. Ազնաւորեան, Քահանայից Համագումարի (Սեպտ. 18 – 21, 2002) առիթով իր բացման խօսքին մէջ, հետեւեալ երկու էական եւ անյետաձգելի կէտերը յստակօրէն ընդգծեց. «Ժողովուրդը յաճախ մեզ, մասնաւորաբար Բահանայ հայրերը, կը նկատէ պարզապէս ծիսակատարներ ... մեր հոգեւորականութիւնը շատ վիրատու է Աստուածաշունչի իր ծանօթութեան մէջ, թերի է իր աստուածաբանական պատրաստութեան մէջ, լաւ չի գիտեր մեր եկեղեցւոյ եւ ուրիշ եկեղեցիներու դասական տարբերութիւնները, եւ դժբախտաբար ի վիճակի չէ ինքզինքն եւ իր հօտը պաշտպանելու աղանդատական մոլոր տեսութեանց դէմ, դեռ չըսելու համար որ թերի է մանաւանդ իր հովուական պատրաստութեան մէջ, ինչ որ տխուր եւ անմխիթար պատկերն է գրեթէ ամենուրեք» (էջեր 47, 49):

¹⁹ Աշրգեան Պատրիարք Խ., «Կենցաղ եկեղեցականաց», էջ 84 – 92:

²⁰ Մեր եկեղեցւոյ չորս Նուիրապետական Աթոռները՝ յեջմիածին (Գեորգեան Ճեմարան), յԱնթիլիաս (Զարեհեան Դպրեվանք), յԵրուսաղէմ (Ժառանգաւորաց Վարժարան) եւ ի Կ.Պոլիս (Ս. Խաչ) կը կասկածիմք որ ունին միաձեւ եւ համապատասխան Բահանայից պատրաստութեան դասընթացք, որոնց միջոցաւ «զուսումն

ունենալն է:

Սրբազան պաշտամունքներուն եւ ժողովուրդի հովութեան մասին մի քանի հարցումներ հարցնելէ ետք, եպիսկոպոսը կը հարցնէ շարք մը ուրիշ հարցումներ, որոնց բարեխղճօրէն պատասխանելը կ'ենթադրէ խորին հմտութիւն²¹ Քրիստոնէական Եկեղեցւոյ հին պատմութեան մասին: Ընծայացուն «հրաժարի եւ նզովէ»²² մինչեւ 5-րդ դար երեւցող բոլոր նշանաւոր հերետիկոսները, որոնց մոլար դարութեանց եւ քարոզութեանց պատճառաւ Քրիստոնէական Եկեղեցւոյ միութիւնը պառակտուեցաւ եւ զանազան վարդապետութիւններ զարգացան եւ ճոխացան: Այդ հերետիկոսներուն վարքն ու կեանքը, քարոզութեանց ժամանակն ու դրութիւնը, այդ առիթներով յառաջ եկած վիճաբանութիւններն ու ժողովները եւ կանոնադրութիւնները ուսումնասիրելով միայն կարելի է մեր Եկեղեցւոյ վարդապետական զարգացման ընթացքը ըմբռնել եւ միայն այդ մանրամասնութեանց հմուտ ըլլալէն ետքն է որ հայ նուիրեալը կրնայ եպիսկոպոսին հարցումներուն խղճի մտօք եւ վստահութեամբ պատասխանել «հրաժարիմ եւ նզովեմ»:

Մեր մէջ քահանայական ձեռնադրութեան կոշման արարողութեան ընթացքին, ընծայեալին ֆիզիքական, մտաւորական եւ բարոյական պատրաստականութիւնը քննելէ ետք, եպիսկոպոսը կը հարցնէ «կարողութիւն ունի եւ յանձն կ'առնէ՞ ուխտել հետեւիլ Քրիստոսի ճանապարհին: Աղփատութեան, քաղցի, ծարաւի, վիշտի, հալածանքի, նախատինքի, եւ շարշարանքի Քրիստոսի համար»²³: Այս պատմական եւ վարդապետական քննութեան երրորդ կարգը՝ սրբազան առաքեալներէն ետք, Ընդհանուր Եկեղեցւոյ փայլուն եւ նշանաւոր կաթողիկէ (այսինքն մինչեւ 5-րդ դար) սուրբ հայրերուն եւ մեր Եկեղեցւոյ հայրերուն կը վերաբերի, որոնց ժամանակի եւ պատմութեան եւ գրաւոր երկերուն հմտութիւն կ'ենթադրէ նուիրեալին «կ'աշակերտիմ եւ կը հետեւիմ» պատաս-

խանայութեան եւ զգիտութիւն աստուածային օրինացն» մեր ժողովուրդին կարիքներուն համապատասխան արդիւնք ունենայ: Թերեւս Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան առաջին եւ գործնական քայլը այս հոգեւոր դարբնոցներուն փառանքն է: Քրիստոնէական պատրաստութեան խիստ պայմաններ եւ դասընթացներ պատրաստելն է: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կրօնական Ժողովը իր Հոկտ. 29 – 31, 2019, ինչպէս նաեւ Փետրուար 8, եւ Մարտ 4, 2020, հերթական ժողովին քննարկեց 15 կէտեր, որոնցմէ երկուքը մեր Եկեղեցւոյ բարեկարգութեան հետ սերտ աղերս ունին: Մէկը՝ Քահանայից պատրաստութիւնն է, որ «շեշտուեցաւ հետեւողական կերպով եւ թեմերու գործակցութեամբ նոր փառանքներու պատրաստութեան առաջնահերթութիւնը: Այս ծիրէն ներս նաեւ վերաշեշտուեցաւ Հիւսիսային Ամերիկայի երեք թեմերու համագործակցութեամբ յիշեալ թեմերու փառանքայնութեան պատրաստութեան եւ վերաորակաւորման տարիներ առաջ նշուած ծրագրի մը մշակումը»: Միւս կէտն էր ծիսական բարեկարգում, որուն ծիրէն ներս «անհրաժեշտ նկատուեցաւ ծիսական կեանքին առնչուած որոշ բարեկարգումներ կատարել... եւ այս աշխատանքը կատարելու համար յանձնախումբ մը նշանակուեցաւ» («ՏՄԿ», Հոկ.Նոյ, 2019, էջ 693 – 694; Փետ.Մարտ, 2020, էջ 151 – 152): Տարօրինակ կերպով միւս թեմերը զանց առնուած կ'երեւին այս կարեւոր պատրաստական աշխատանքին: Քահանայից Համագումարին, Մաշտոց Վրդ. Զօպանեան, ներկայացուց «Հայ Հոգեւորականին Պատրաստութեան Այսօրուան Պահանջները» թեմայով դասախօսութիւն (էջ 164 – 177), որուն մէջ ան ընդգծեց աստուածաբանական, քաղաքական, քաղաքական աստուածաբանական լուրջ պատրաստութիւն, Աստուածաշունչի խորունկ եւ մասնագիտական ծանօթութիւն, եւ մանաւանդ Ս. Գրային սերտողութիւն վարելու սկզբունքներն ու կերպերը:

²¹ Այստեղ կը փափաքեմք շեշտել Քրիստոնէական Եկեղեցւոյ բոլոր եկեղեցիներուն պատմութեան եւ վարդապետութեան մասին խոր ծանօթութիւն ունենալու անհրաժեշտութիւնը: Օրինակի համար, եթէ մեր փառանքայ հայրերուն հարց տանք որ մեզի բացատրեն մեր բոլոր եկեղեցիներուն (Ղպտի, Ամտիոքի, Նքովայի, Մալանֆարա Ասորի) ինչպէս նաեւ Լատին Կաթոլիկ եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներուն (Յոյն, Ռուս, Ֆինլանտացի, Կիպրացի, Ռումանացի, Վրացի) պատմութիւնն ու վարդապետութիւնը, խորհուրդներն ու նուիրապետական աստիճանները, վստահ եմ որ շատ քիչեր, չըսելու համար ոչ ոք, կարող պիտի ըլլայ պատասխանելու այդ հարցումին:

²² Տիեզերական առաջին երեք ժողովներէն անդին, հայ ամուսնացեալ եւ կուսակրօն փառանքայ պետական ծանօթութիւն ունենայ Ուղղափառ Եկեղեցւոյ չորս (Քաղկեդոն (451), Կ.Պոլսոյ Բ. (553), Կ.Պոլսոյ Գ. (680-681) եւ Նիկիոյ Բ. (787) ժողովներուն եւ Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցւոյ 14 այլ ժողովներուն մասին: Հարցումը, որուն նաեւ պէտք է պատասխանել, 5-րդ դարէն առաջ եկող բոլոր հերետիկոսները կը նզովենք, այդ դարէն ետք եկած հերետիկոսները պէտք չէ՞ նզովուինք:

²³ Մեսրոպ Գ., «Հովուական Աստուածաբանութիւն Հայց. Ս. Եկեղեցւոյ» (էջ 123 – 124):

խանր: Տիեզերական երեք Սուրբ Ժողովներուն եւ անոնց մասնակցած հայրապետներուն (գոնէ գլխաւոր եւ ամենէն կարեւորներուն) վարքերուն եւ գործերուն տեղեակ եւ հմտութիւն կը խոստովանի նուիրեալը: Եւ ի վերջոյ, որպէսզի բան մը մոռցուած չըմնայ, եպիսկոպոսը կը հարցնէ «կ'աշակերտիս եւ կը հետեւի՞ս ուղղափառ եւ սուրբ բոլոր հայրապետներուն՝ որոնք ուղիղ դաւանութեամբ մեզի կը համառօտեն նշմարտութեան խօսքը», որուն ընծայեալը կը պատասխանէ «կ'աշակերտիմ եւ կը հետեւիմ»²⁴:

Առաքելական դարուն ձեռնադրութեան առաջին օրինակները կը գտնենք Գործք Առաքելոցի 13-րդ գլխուն մէջ (13:3), ուր կը կարդանք հետեւեալը. ըստ որոշման Հոգւոյն Սրբոյ՝ Առաքեալք «աղօթելով եւ պահմ պահելով ձեռներնին ամոնց (Բառնաբասին եւ Սատուին) վրայ դրին եւ արձակեցին»: Նոյնպէս Պօղոս Առաքեալի Տիմոթէոսի ուղղւած թուղթին մէջ կը կարդանք «Անփոյթ մի՛ ըլլար շնորհներուդ նկատմամբ, որ մարգարէութեամբ քեզի տրուեցաւ երիցութեան ձեռնադրութենէն» (Ա. Տիմոթէոս, 4:14): Նաեւ Ա. Տիմոթէոս 5:22-ին մէջ կը կարդանք, ուր Պօղոս երիտասարդ եպիսկոպոսին կը պատուիրէ «Ձեռքդ արագօրէն ոեւէ մէկուն վրայ մի՛ դնէր»: Նման օրինակներու եւ պատուիրաններու համաձայն, բայց առաւելապէս կենդանի աւանդութեան շնորհիւ, որով սերունդէ սերունդ առաքելական յաջորդութեան շնորհքը անաղարտ մեր ձեռքը հասած է, Հայց. Եկեղեցին իր Ձեռնադրութեան կարգը յօրինած է:

Ձեռնադրութեան էական կէտերն են.- (1) դիտում կամ որոշում, (2) աղօթք ըստ վերոյիշեալ ծանօթութեան, (3) եւ առաքելական ձեռնադրութիւն (այսինքն, առաքելական կատարեալ յաջորդութիւն ունեցող անձին, որ է՝ եպիսկոպոսի կողմէ): Ձեռնադրութեան կարգի միւս մասերն են (թէեւ կանոնապէս անհրաժեշտ) առաքելական (այսինքն քահանայութեան) շնորհքը հաղորդելու համար էական կէտեր չեն: Անոնք այդ նուիրական գործողութեան՝ հանդիսաւորութիւն եւ ազդեցութիւն ընծայելու կը ծառայեն, եւ մեր ներկայ խնդրին լուսաբանութեան կը նպաստեն իբրեւ երկրորդական փաստեր: Քահանան զՅիսուս ունի իբրեւ տիպար, որուն պէտք է հետեւի — որուն նման փորձէ իր կեանքը ապրիլ:

Քահանայացուին ձեռնադրութեան դիմումը եւ զինք ընտրող ժողովուրդին²⁵ կողմէ իր վաւերացումը օր մը առաջ արդէն Կոշման կարգին ընթացքին յայտնի է, ուր ակնյայտ կերպով կ'երեւի որ ընծայեալը եւ ժողովուրդը կը փափաքին որ այս անձը քահանայ կոչուի: Բայց ձեռնադրութեան վաւերութեան համար անհրաժեշտ է որ ձեռնադրող եպիսկոպոսն²⁶ ինքն եւս կատարելապէս համոզուած ըլլայ ձեռնադրողին

²⁴ Անգամ մը եւս պէտք է հարցաքննել, թէ մեր ամուսնացեալ եւ կուսակրօն ֆահանայ հայրերը Ընդհանուր եկեղեցւոյ հայրերուն. Աթանաս Աղեքսանդրացիէն, Բարսեղ Կեսարացիէն, Գրիգոր Նիսացիէն, Գրիգոր Նազիանզացիէն (ծանօթ որպէս Գր. Աստուածաբան), Յովհաննէս Ոսկերեւանէն, Կիրեղ Աղեքսանդրացիէն եւ Տիեզերական ժողովներու կանոններէն ու որոշումներէն զատ ուրիշ որ եկեղեցական հայրերուն լաւապէս ծանօթ են անոնք: Կարդացա՞՞ծ են գոնէ ամոնց ամենէն կարեւոր գործերը:

²⁵ Քահանայական աստիճանի այս սովորութիւնը դադրած է այլեւս Հայ Եկեղեցւոյ մէջ, երբ ֆահանայները, որոնք հոգեւոր հովիւ պիտի ըլլան, կը զատուին առաջնորդներու կողմէ: Շատ յաճախ որոշ գաղութի մը համար ընտրուած եւ ձեռնադրուած ֆահանայ լաւագոյն ընտրութիւնը չըլլար եւ գաղութին համար աւելի կործանիչ է նման ֆահանայի մը պաշտօնը: Շատ հաւանաբար, որպէս բարեկարգութիւն մեր եկեղեցւոյ աշխատանքին, ֆահանայ հայրեր, որոշ ժամանակաշրջանի (2-3 տարիներ) համար գաղութի մը մէջ ծառայեն եւ առաջնորդին եւ ժողովուրդին կողմէ քննութեան ենթարկուին հովուական պաշտօնի ամենէն կարեւոր կէտերուն մէջ: Հովուական աշխատանքին շուրջ հիմնական բաժինները կարելի է նկատել ֆարգիսօսութիւն եւ եկեղեցական կարգերու մտաւորութիւն, երգչախումբի բարելաւում, Կիրակնօրեայ վարժարաններու բարելաւում եւ ժողովուրդին Կիրակի օրերու մասնակցութիւն Ս. Պատարագին:

²⁶ Ահաւասիկ ուրիշ կէտ մը եւս որ բարեկարգումի կը կարօտի: Անհատներ, որոնք կը փափաքին ֆահանայանալ, Կիլիկեան թեմերու պարագային, կը յաճախեն Անթիլիասի Կաթողիկոսարանի Քահանայից Պատրաստութեան Դասընթացները եւ շատ յաճախ ո՛չ ձեռնադրող եպիսկոպոսը կամ առաջնորդը ծանօթ են ընծայեալին պատրաստութեան եւ կամեցողութեան: Երբեմն այդ անձերէն շատեր բաւարար ո՛չ կրօնական

արժանաւորութեան վրայ:

Նախորդ օրուան՝ կոչման քննութեան շնորհիւ համոզուած ըլլալով ընծայեալին արժանաւորութեան մասին, եպիսկոպոսը ձեռնադրութեան առաւօտուն իր պաշտօնական զգեստները հագած եւ հովուական աթոռին վրայ բազմած՝ նորէն կը հարցնէ.

«Եւ գիտէ՞ք եթէ արժանաւոր է, թէ ո՞րպէս կամ ունի՞ր քաղաքավարութիւն, եւ թէ ո՞րքան իմաստութիւն»²⁷ եւ սրբութիւն»²⁸ ունի»:

Որուն կը պատասխանէ խարտաւիլակը ի դիմաց ժողովուրդին ընծայեալին մասին.

«Այնչափ՝ որքան մարդկային մեր տկարութիւնը մեզի կարողութիւնը կու տայ նանչնալ՝ գիտեմք եւ կը վկայեմք ասոր արժանաւոր ըլլալուն աստիճանին այս լուծը վերցնելու, ունենալով սրբութիւն եւ իմաստութիւն»:

Ուշադրութեան արժանի է դարձեալ արժանաւորութեան այս պայմանները՝ սրբութիւն»²⁹ եւ իմաստութիւն: Նոյնպէս նկատելի է որ երբ նուիրեալը՝ այսինքն քահանայացուն կը տանին եպիսկոպոսին առջեւ, «եպիսկոպոսն տեառնագրէ ի վերայ նուիրելոյն եւ ասէ. «Տէրը պիտի ընդունի քեզ»: Այսինքն Աստուած է կոչողը, Աստուած է որ զինք կ'ընդունի քահանայութեան կարգին մէջ: Եպիսկոպոսը միայն գործիք է Աստուծոյ ձեռքին մէջ, Անոր կամակատարն է, որ պարգեւելու հրաման ունի, բայց յետ առնելու կամ ջնջելու հրաման չունի»³⁰: Այս մտածումը նորէն կը շեշտուի սարկաւագին

պատրաստութիւն ունին եւ մանաւանդ Աստուծոյ խօսքը փարգեւելու կարողութիւնն ու պատրաստութիւնը ունին: Անցնող գոնէ 150 տարիներուն, մեր ժողովուրդի արդար տպաւորութիւնն է որ անձեր, որոնք աշխարհական կեանքի մէջ ձախողած են, փախանայութեան կը դիմեն եւ կը ձեռնադրուին ու կը դառնան ժողովուրդին այսպէս կոչուած «հոգեւոր հովիւներ» եւ այդ անձերը ո՛չ հոգեւոր զգացում ունին եւ ո՛չ ալ հովութենէ կը հասկնան: Կարգաւ Անդրանիկ Ա. Քնյ. Պալմեանի «Preparing Laborers for the Harvest: The Imperative of Clergy Recruitment and Training» յօդուածը, հրատարակուած Ամերիկայի Արեւելեան Թեմի Յովիս-Սեպտեմբեր, 2003, Outreach Պարբերաբերքին մէջ, էջ 11 – 15, ինչպէս նաեւ Խաչիկ Զօրայեանի «The New Challenge: The American-Born Priest» յօդուածը, նոյն Պարբերաբերքին մէջ (էջ 9-10):

²⁷ «Զի թէ (ոք) գիտուն է Ս. Գրոց եւ ոչ ունի զգործն, կամ թէ ունի զգործն եւ ոչ ունի զգիտութիւն, անարժան է փահանայութեան», Վարդան Վրդ., Յաղագս Քահանայութեան, Մաշտոց էջ 343:

²⁸ Ձեռնադրութեան հարցումին «սրբութիւն» բաժինը, եկեղեցոյ պաշտօնեային նկարագրին ամենէն կարեւոր արտայայտութիւնն է: Բարգէն Կթղ. իր «Հայց. եկեղեցոյ Բարեկարգութեան Վերաբերեալ Խնդիրներ» յօդուածաշարին մէջ, հետեւեալը կ'ըսէ նկարագրին մասին. «Արդ, կոչումէն ետք, նկարագիրը պիտի ըլլայ առաջին փնտրուելիք յատկութիւնը հոգեւոր պաշտօնի թեկնածուներուն... Նկարագիրը միայն իր բարոյական ու կենցաղագիտական արժէքին համար չէ որ կը փնտրուի մարդու մէջ, այլ նաեւ անոր սկզբունքներուն եւ համոզումներուն հետ ալ սերտիւ կապուած է ան... Հոգեւոր պաշտօնեան իր նկարագրով միայն կրնայ տոկալ դժուարութիւններու եւ համբերել՝ հմարաւորութեան լաւ տրամաբանուած սահմաններուն մէջ, եւ ցոյցնել իր սուրբ պաշտօնին ոգին, որով պիտի ոգեւորուի նաեւ հաւատացեալներու բազմութիւնը» («ՍԻՈՆ», 1929, Յունիս, էջ 161 – 163): Մեսրոպ Գ., «Հովուական Աստուածաբանութիւն Հայց. Ս. եկեղեցոյ», (էջ 89 – 91): Աշրգեան Պատրիարք Խ., «Կենցաղ եկեղեցականաց», էջ 44 – 54:

²⁹ Ս. Ներսէս Շնորհալի, հետեւեալ բացատրութիւնը կու տայ սրբութեան մասին «Ըստ այսմ օրինակի եւ առաջնորդ եկեղեցոյ որ ոք երկոքումք աշօք լուսատրեալ իցէ, այսինքն գիտութեամբ Աստուածաշունչ Գրոց եւ առաքինասէր գործովք՝ անբծութեամբ եւ սրբութեամբ, ամենայն արդարութեամբ՝ զոր պատուիրանք Աստուծոյ ուսուցանեն, այնպիսին, որպէս անձին իւրոյ, նոյնպէս եւ համօրէն եղբայրութեան բարոյ առաջնորդէ յաստուածայինսն: Իսկ որ զմի յաչացն բաց ունիցի եւ միւսովն կափուցեալ կրէ, այսինքն՝ որ կամ գիտութեան առանց գործոց առաքինութեան, եւ կամ առաքինութիւն առանց գիտութեան ունիցի, թերի է ի բարեաց եւ ոչ կատարեալ, քանզի միականեաց նմանի այսպիսի: Զի թէպէտեւ որ զիմաստութիւնն ունիցի՝ գիտէ զշափոս արդարութեան համապարհին ուղիղ ուսուցանել բանիւ, այլ ինքեան ոչ գնալով ընչ նոյն գործով, ոչ կարէ հաւանեցուցանել զայլս եմալ: Նոյնպէս եւ այն՝ որ սրբութեամբ վարում իցէ միայն առանց գիտութեան գրոց, թէպէտեւ անձամբ իւրով գնայ ընդ համապարհ օրինացն Աստուծոյ, բայց զի այլոց որպէս արժանի է՝ ոչ գիտէ իմաստութեամբ առաջնորդել, վասն այնորիկ բազում անկարգութիւն մտանէ յեկեղեցի» (Թուղթ Ընդհանրական, էջ 34, 35):

³⁰ Մայր Մաշտոցին մէջ հետեւեալ խրատը կայ, որ լիովին կը հաստատէ վերոյիշեալ մեկնութիւնը. «Եւ եպիսկոպոսն դնէ զաշն ի վերայ գլխոյ նուիրելոյն (որ ցուցանէ թէ՛ տուողն իշխանութեանց եւ շնորհաց՝ Հոգին Սուրբ

քարոզով, որ անիմշապէս կը յաջորդէ.

«Աղաչեմք մարդասէր Աստուծոյ (այս անուն) սարկաւագին համար որ պատրաստ է կոշտիլ քահանայութեան, որպէսզի արժանի ըլլայ կոշտմին զօրութեան եւ ձեռնադրութեան շնորհներուն *առնելու ամենակալ Աստուծոյ քահանայութեան շնորհքը*, թող ապրեցնէ եւ թող ողորմի»:

Սարկաւագի այս հրաւերներուն համեմատ շրջապատող քահանաները իրենց ձեռքերը նուիրեալին ուսերուն վրայ կը դնեն, մինչ եպիսկոպոսը նոյնպէս «կը դնէ իր աջ (ձեռքը) նուիրողին գլխուն վրայ» եւ նախապատրաստական աղօթքը կը կարդայ, ուր մասնաւորաբար կ'աղօթէ՝

«Տուր այս ծառային շնորհք *առնելու քահանայական աստիճանը Ամենակալ Աստուծոյ*, արժանատի ըլլալու Սուրբ Հոգին ընդունելու առնելու վերակացութեան պարգելը արժանատի կերպով»:

Զկնի խաղաղութեան դարձեալ կրկնէ.

«Կ'աղաչեմ Քեզի, Երկնաւոր Հայր, դրկէ՛ սուրբ Հոգիդ եւ օրհնէ՛ այս նորընծան, որ Քու սուրբ սեղանիդ առջեւ է, առնելու քահանայութեան աստիճանը եւ ըլլալ տեսուչ (վերակացու կամ տնտես) Քու ժողովուրդիդ եւ արքայական առաքեալներուն»:

Բ. ԶԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Այս բոլոր նախապատրաստական արարողութիւնները, քարոզ, աղօթք եւ օրհնութիւն մենքն պարզ կերպով կը հաստատեն այն ինչ որ այս յօդուածին սկիզբը ըսուեցաւ քահանայական աստիճանի անշնչելիութեան մասին, եւ ինչ որ կոշման միջոցին քահանայացուի արժանաւորութեան մասին պահանջուեցաւ եւ ենթադրուեցաւ: Ապա, ընծայեալը ժողովուրդին կը դառնայ, եւ հրաժարելով աշխարհի հոգերէն եւ փորձութիւններէն, «Աստուածային եւ երկնաւոր շնորհը ... [այս անուն] անձը կը կոչէ սարկաւագութենէ քահանայութեան, որուն արժանի է, ինչպէս ինքն՝ ընծայեալը եւ մենք՝ ժողովուրդը առհասարակ կը վկայենք»³¹: Ժողովուրդին ձայնը կարեւոր է կոշտմը կանոնական ըլլալու համար³²:

Զեռնագրութեան բուն գործողութիւնը կը սկսի, երբ եպիսկոպոսը «խաչանման կը դնէ իր ձեռքը նուիրեալին գլխուն վրայ եւ կ'ըսէ».

«Ես ձեռքս ասոր վրայ կը դնեմ եւ դուք բոլորդ աղօթեցէ՛ք, որպէսզի ասիկա արժանի ըլլայ քահանայութեան աստիճանը անարատ պահել Տէր Աստուծոյ սեղանին առջեւ»:

Յետոյ կը սկսի գլխաւոր աղօթքը, որով նորընծան կը յանձնէ *Ամենակալ Աստուծոյ խնամքին*, որպէսզի անշարժ պահէ զինք «քահանայութեան կարգին մէջ, որուն կոչուեցաւ»: Ապա կը թուէ մէկ առ մէկ այն բոլոր շնորհները, որոնք քահանային կը տրուին եւ մեր յօդուածին հետ ամենասերտ առնչութիւնը ունին, որովհետեւ տարակոյս չկայ թէ ինչ որ կը խնդրուի եւ կ'ընդունուի յԱստուծոյ այս վայրկեանիս՝ այդ ամէնն է քահանայի պարտականութիւններն ու իրաւունքները, իր պաշտօնավարութեան եւ կենցաղավարութեան միջոցին: Ես միայն առաջ կը բերեմ այն խօսքերը, որով քահանային կը տրուին այն մասնաւոր շնորհները՝ մասնաւորաբար քահանային պարտականութիւն-

է. եւ եպիսկոպոսն սպասաւոր է եւ միջնորդ, որպէս խողովակն յաղբերէն զջուր առեալ ի քեզ անցուցանէ»: Մայր Մաշտոց (Կ.Պոլիս, 1807), էջ 264:

³¹ Աշրգեան Պատրիարք Խ., «Կենցաղ եկեղեցականաց» էջ 132 – 158:

³² «Այո՛, ժողովրդեան հանութիւնը պէտք է քահանային համար, որովհետեւ աստուածային պաշտօնը ժողովրդեան համար պիտի ընդունի եւ ոչ թէ ի անձին համար» Աշրգեան Պատրիարք Խ., «Կենցաղ եկեղեցականաց», էջ 41:

ներն ու իրաւունքները:

«Լսէ հիմա, ո՛վ Տէր, մեր աղաչանքներուն ձայնը եւ այն, զոր ընտրեցիր եւ ընդունեցար որպէս երէց այս ծառադ (զայս անուն) որ հիմա կը ձեռնադրուի, անշարժ պահէ քահանայական աստիճանին մէջ, որուն համար կոչուեցաւ: Ասոր շնորհէ զգաստ սիրտ՝ զգուշութեամբ պահել Քու բոլոր պատուիրաններդ, սիրել Քեզ իր սրտին եւ իր բովանդակ մտքին ամբողջ զօրութեամբ: Որպէսզի սուրբ սրտով, անկեղծ հաւատքով եւ ճշմարտութեամբ երթայ արդարութեան ճանապարհէն, աւելի բարի գործեր կատարէ Քու բարեսէր կամքիդ համաձայն, հաստատուն եւ անաւատ մնայ փառանայութեան գործին մէջ Քու առջեւդ, Քու կաթողիկէ եկեղեցիիդ մէջ, որ կառուցուած եւ հաստատուած է առաքեալներու եւ մարգարէներու հաւատքի ժայռին վրայ:

Ա. Թող ասիկա ըլլայ մշակ առանց ամօթի, ուղիղ կերպով բացատրելու ճշմարտութեան խօսքը, սերմանելու առաքելական եկեղեցւոյ կեանք տուող եւ ուղղափառ հաւատքը բոլոր ունկնդիրներուն³³:

Բ. Տո՛ւր ասոր առաքելական շնորհքը մերժելու եւ մարդոցմէ հեռացնելու բոլոր տեսակի շար ախտերը եւ պիղծ հոգիները, իր ձեռքը դնելով անոնց վրայ եւ Քու ամենագորանունդ կարգաւորվ անոնց վրայ որպէս օգնութիւն եւ բժշկութիւն:

Գ. Եւ արժանաւոր պիտի ըլլայ երկինքէն կոչելու Սուրբ Հոգիդ սուրբ աւագանէն վերստին ծնողներուն եւ լուսաւորուողներուն հոգեւոր կենդանութեան համար, որով Քու որդեգրութեան մեծ շնորհքին հասնին, ըլլալու ժառանգորդ երկնքի արքայութեան եւ տաճար Սուրբ Հոգիին:

Դ. Եւ հաւատքով կատարելու մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի Մարմնին եւ Արեան ահաւոր եւ երկնային խորհուրդը մեղքերու թողութեան արժանաւորապէս հաղորդւողներուն:

Ե. Եւ փառանայական կարգի միւս բոլոր կարգերը առաքինութեամբ կատարելով՝ ըլլալու փառաւորողը սուրբ Երրորդութեան եւ երանալի առաքեալներուն հետ իբրեւ վարձք ընդունի յաւիտենական կեանքին մէջ, կրկին պատիւի արժանի ըլլալու:

ՆԱԽԱՍԱՐԴ ՄԱՐՏՈՅԵԱՆ

(Շար. 1)



³³ Տե՛ս Ազգաւորեան Արք. Զարեհ, «ԳԱստուած Տեսնել», յօդուած՝ «Աստուածաշունչին Տեղը եւ Ոստւոյումը Հայաստանեայց եկեղեցւոյ Մէջ», էջ 262 – 285: